Կրթության և առողջապահության համակարգերի դերը Հայաստանում պտղի սեռի խտրական ընտրության կանխարգելման մեջ

Քաղաքականության համառոտագիր

Հայաստանի Հանրապետությունը (ՀՀ) նորածինների սեռերի համամասնության ամենամեծ շեղում ունեցող երկրների թվում է: Համաձայն ՀՀ վիճակագրական կոմիտեի տվյալների՝ նորածինների սեռերի համամասնությունը 2021 թ.-ին եղել է 108.8 տղա 100 աղջկա հաշվով, մինչդեռ նորածինների սեռերի համամասնության բնական մակարդակն աշխարհում 104-106 տղայի հաշվով 100 աղջիկ է: Թեպետ վերջին տարիներին իրականացված ծրագրերի արդյունքում սեռերի համամասնության՝ 2012 թ. 115 տղա՝ 100 աղջկա հաշվով ցուցանիշը նվազել է՝ 2021 թ.-ին հասնելով 108.8 տղայի, սակայն 2022 թ. առաջին կիսամյակի տվյալներով ցուցանիշը կրկին աճել է՝ հասնելով 111-ի, ինչը 2021 թվականի առաջին կիսամյակի ցուցանիշից (108) 3 նիշով ավելի է:

Փորձը ցույց է տալիս, որ իրավիճակի բարելավմանն ուղղված ջանքերի շարունակականությունն է, որ կարող է ապահովել ձեռքբերումների կայունություն, հետընթացի կանխարգելում և առաջընթացի խթանում: Սեռերի անհամամասնության ցուցանիշի կրճատման հարցում դրական ազդեցություն է ունեցել միջոլորտային շարունակական համագործակցությունը, խնդրի լուծման մեջ շահագրգիռ պետական և ոչ պետական տարբեր կողմերի ներգրավվածության խթանումը: Մասնավորապես, էական դեր ունի պետական գերատեսչությունների, տեղական և միջազգային կազմակերպությունների համակարգված աշխատանքը Պտղի սեռի խտրական ընտրության կանխարգելման 2020-2023 թվականների ծրագրի շրջանակներում, ինչը ներառում է քաղաքականությունների մշակում, կարողությունների զարգացում և քարոզարշավներ: Այս համատեքստում կարևոր է հատկապես բուժաշխատողների կարողությունների զարգացումը և գենդերազգայունության խթանումը: Ուստի, անհրաժեշտություն է առաջանում ապահովել արդեն իսկ գրանցված հաջողությունների կայունությունն ու ստեղծված մեխանիզմների հետագա կիրարկումը՝ կրթության և առողջապահության ոլորտներում պտղի սեռով պայմանավորված խտրական ընտրության կանխարգելումը ավելի համակարգված իրականացնելու համար:

Հաշվի առնելով վերոնշյալը՝ սույն փաստաթուղթը առաջարկություններ է ներկայացնում՝ հիմնվելով 2022 թ. հունիսին Հայաստանում պտղի սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատման տարածվածությունը և պատճառները գնահատելու նպատակով իրականացված հետազոտության արդյունքների վրա:

Հետազոտությունից քաղված արդյունքներ

Հետազոտության արդյունքների համաձայն՝ հարցվածների, այս դեպքում՝ երբևէ հղիություն ունեցած կանանց կրթության աստիճանը ազդում է երեխայի պլանավորման և երեխայի սեռի նախընտրության վրա: Մասնավորապես, բարձրագույն և հետբուհական կրթություն ունեցող հարցվածների ընտանիքներում վերաբերմունքը երկու սեռի երեխայի նկատմամբ նշանակալիորեն ավելի նույնանման է, քան ավելի ցածր կրթական աստիճան ունեցող հարցվածների դեպքում: Հարցվածների 3%-ը կարծում են, որ իրենք ընդհանրապես հնարավորություն չունեն որոշելու, թե քանի դուստր կամ քանի որդի ունենան: Վերլուծությունն ըստ ժողովրդագրական խմբերի ցույց է տալիս, որ այդպես կարծողների տեսակարար կշիռը ամենաբարձրն է միջնակարգ կամ ցածր կրթություն ունեցողների շրջանում՝ 5%: Ինչպես նաև էական է առողջապահական համակարգի դերը՝ հղի կանանց և նրանց ընտանիքի անդամներին իրազեկելու և սահմանված կանոնակարգերին հետևելու առումով: Այսպես, ուլտրաձայնային հետազոտություն չանցած հարցվածների ամենամեծ տեսակարար կշիռը ներկայացնում են միջնակարգ և ցածր կրթություն ունեցողները: Նրանց 18%-ը նշել է, որ չի անցել ուլտրաձայնային հետազոտություն, մինչդեռ բարձրագույն կամ հետբուհական կրթություն ունեցողների 6%-ն է նշել, որ չի անցել նման հետազոտություն:

Հետազոտության շրջանակում տեղի ունեցած ֆոկուս խմբային քննարկումների մասնակից բուժաշխատողները նշել են, որ իրավիճակը հասկանալու և հղիության ընդհատման որոշումից հետ պահելու նպատակով առանձին զրույցներ են ունենում հղիների հետ: Սակայն, առողջապահության համակարգից զատ, կարևորում են կրթության, օրենքների և զանգվածային լրատվական միջոցների դերը՝ խնդիրը ավելի վաղ փուլերում կանխարգելելու համար:

Առաջարկություններ

Ելնելով վերոնշյալից՝ առաջարկվում է իրականացնել մի շարք միջոցառումներ, որոնք ուղղված կլինեն երեխայի արժևորմանը՝ անկախ սեռից, և առողջապահական համակարգի կարողությունների ամրապնդմանը՝ թիրախային խմբին պատշաճ խորհրդատվության ապահովման ու իրազեկման, ինչպես նաև օրենքների կիրարկման առումով:

Մասնավորապես անհրաժեշտ է.

- նպաստել այնպիսի քաղաքականությունների (այդ թվում և հատկապես կրթական) մշակմանը, որոնք ուղղված են կանանց դերի բարձրացմանն ու արժևորմանը հասարակությունում և, ընդհանրապես, անհատի արժևորումը սեռով չպայմանավորելուն.

- դպրոցներում և բուհերում իրականացնել լայնամասշտաբ և բազմաֆորմատ քարոզարշավներ ու հանրային իրազեկման նախաձեռնություններ՝ ուղղված աղջիկ երեխաների արժևորմանը և, ընդհանրապես, երեխայի արժևորմանն՝ անկախ սեռից, կանանց դերի բարձրացմանը՝ շարժվելով դեպի մարդու, անհատի դերի արժևորումը՝ անկախ սեռից, սոցիալական նորմերի վերափոխմանը, կարծրատիպերի և դրանց արդյունքում առաջացած վնասակար գործելակերպերի վերացմանը.
- ապահովել ապագա հայրերի և ընտանիքի ավելի տարեց անդամների ներգրավումը պտղի սեռով պայմանավորված խտրական ընտրության թեմայով անցկացվող դասընթացներին, քարոզարշավներին՝ վերջիններիս վերաբերմունքի փոփոխության նպատակով.
- ապահովել պատշաճ նախաամուսնական խորհրդատվության և կարողությունների զարգացման հնարավորություններ, այդ թվում՝ սեռական դաստիարակության, ընտանիքի պլանավորման, ծնողավարման վերաբերյալ.
- զարգացնել բուժաշխատողների՝ նախաաբորտային և հետաբորտային խորհրդատվության կարողությունները, ինչպես նաև գիտելիք և տեղեկություն փոխանցել գենդերային կարծրատիպերի հետևանքով առաջացող վնասակար գործելակերպերի, պտղի սեռի խտրական ընտրությամբ պայմանավորված ժողովրդագրական խնդիրների մասին.
- ուշադրության կենտրոնում պահել առողջապահական հաստատությունների աշխատանքը, մասնավորապես՝ 12 շաբաթականից հետո պտղի հեռացման դեպքերի ուսումնասիրման, վերջիններիս պատճառները հասկանալու նպատակով:

Պտղի սեռով պայմանավորված խտրական ընտրության վերաբերյալ հետազոտությունը ներառում է հարցում՝ երբևէ հղիություն ունեցած 1920 կնոջ շրջանում, և որակական վերլուծություն՝ հիմնվելով ֆոկուս խմբային քննարկումների վրա:

Հետազոտությունն իրականացվել է «Պտղի սեռով պայմանավորված խտրական ընտրության և հարակից վնասակար գործելակերպերի կանխարգելումը Հարավային Կովկասում. աջակցություն տարածաշրջանային, ազգային և հարավ-հարավ նախաձեռնություններին» ծրագրի շրջանակում: Ծրագիրն իրականացվում է ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի կողմից՝ ՕքսԵՋԵՆ հիմնադրամի հետ համագործակցությամբ: Ծրագիրը ֆինանսավորվել է Եվրոպական միության և ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի կողմից: Հետազոտությունն իրականացրել է Բրեվիսը: